ԽՈՐԵՆԱՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԸ

Մեր առջև ունենք թեև ծավալով փոքր, բայց բազմամյա մանրակրկիտ ուսումնասիրության արդյունք հանդիսացող մի աշխատություն՝ Գ. Խ. Սարգսյանի «Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը» (Երևան, 1965), որ լույս է ընծայել Հայկ. ՍՍՌ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտը։

Աղբյուրագիտական այս ուսումնասիրության առարկան, ինչպես արդեն ցույց է տալիս նրա խորագիրը, դարձյալ Մովսես Խորենացին է, այն Խորենացին, որի հետ կապված գիտական հարցերը մեր բանասիրական հարուստ դրականության մեջ տեղ են գրավել արդեն տասնյակներ կազմող առանձին հատորներով և պարբերական մամուլում հրատարակված հարյուրավոր հոդվածներով։ Խորենացու «Հայոց պատմության» հարցերով բանասիրական աշխարհը սկսել է զբաղվել դեռևս XVIII դարի սկզբներից, իսկ այսօր, ավելի քան երկու և կես դար հետո, մեր ժամանակի գիտնականները տակավին շարունակում են հետազոտությունների շղթան թեր և դեմ կարծիքներով՝ ճշտելու համար Խորենացու ապրած ժամանակը, նրա կոթո-ական երկի պատմագրական նշանակությունը, նրա մատենագրական հայտնի և անհայտ աղբյուրները, նրանում նկարագրված դեպքերի ժամանակագրական արժեքը և այլ բազմաթիվ հարցեր, որոնցից շատերը դեռ բավարար լուծում չեն ստացել։ Եվ ահա հանձին Գ. Խ. Սարգսյանի, մենք այսօր տեսնում ենք մի նոր ներկայացուցիչ ուսումնասիրությունների տվյալ բնագավառում։

Հեղինակն արդեն իրավացիորեն նշում է, որ Խորենացու «Հայոց պատմության» պարունակած զանձերը «գտնվում են մեծ մասամբ ոչ թե շարադրանքի մակերևսին, այլ նրա ընդերքում» և որ «այնտեղից դրանք լույս աշխարհ բերելը հաճախ կապված է մեծ դժվարությունների հետ» (էջ 5)։ Եվ ինչպես տեսնում ենք, նա նպատակադիր է եղել սույն աշխատությամբ նվիրվելու այդ ընդերքի հետազոտության օգակներից մեկին։ Իհարկե, ինչպես ինքն է դիտել տալիս, այն հանգամանքը, որ «Խորենացին հին Հայաստանի մասին իր տվյալ տեղեկությունների համար մեծ մասամբ զուգահեռ աղբյուր չունի» (էջ 5) և մանավանդ այն, որ նա՝ Խորենացին «ոչ միայն պատմիչ է, այլև պատմաբան, և գերազանցապես պատմաբան» (էջ 5), որն իր ձեռք բերած դրավոր ու բանավոր տվյալները քննադատաբար ու մշակողաբար է օգտագործել, ինքնըստինքյան դժվարացնում է «Հայոց պատմության» տվյալ ժամանակաշրջանի հետ կապված հարցերի ուսումնասիրությունը։ Եվ առաջին հերթին այս տեսակետից էլ պիտի ողջունելի համարել քննարկվող աշխատության հեղինակին, որ ինքը Մովսես Խորենացուն հայող հետազոտությունների բնագավառից ընտրել է մի այնպիսի հարց, որն իր կարևորությամբ գրավում է առաջնակարգ տեղերից մեկը, նույնիսկ կարելի է ասել ամենակարևորը, քանի որ Խորենացու «Պատմության», ինչպես պատմական ամեն մի աշխատության, հիմքը կազմում է ժամանակագրությունը։ Խորենացին ինքն իսկ այդ մասին ասում է իր երկի Գ գրքի ՁԲ գլխում, թե «ոչ է պատմութիւն ճշմարիտ առանց ժամանակագրութեանն։ Ուստի և՝ եթե մենք կարողանանք ուղիղ բմբռնել Խորենացու ժամանակագրական համակարգի էությունը, դրանով արդեն կհարթվի Խորենացու «Պատմության» հետ կապված շատ հարցերի լուծման ուղին։

Խորենացու ժամանակագրական համակարգի հարցն անցյալում զբաղեցրել է հայագիտության այնպիսի հայտնի ներկայացուցիչների, ինչպիսիներ են Ս. Մալխասյանը և Ն. Ադոնցը։ Չենք խոսում ուրիշների մասին, որոնք անցողակի զբաղվել են այս հարցով։ Ներկա ուսումնասիրության հեղինակի մասին պետք է ասել, որ նա ընտրել է ճիշտ ուղի, ըստ որում Խորենացու «Պատմության» Բ և Գ գրքերում եղած ժամանակագրական տվյալների և նրա մի շարք այլ ցուցումների վրա հենվելով, աշխատել է վերականգնել նրա օգտագործած ժամանակագրական համակարգը, որոնել ու բացահայտել նրա առնչություններն արդի պատմագիտության մեջ ընդունված ժամանակագրության հետ և հիմնավորված բացատրություն տալ Խորենացու մոտ ի հայտ եկող շեղումներին։ Այսպիսի դրվածքը հեղինակին հնարավորություն է տվել ընթանալու հարցի լուսաբանման հուսալի ուղիով։

Ինչպես հեղինակն ինքն է նշում, այդ ուղին ժամանակին մատնացույց էր արել բանասեր-պատմաբան Ն. Ադոնցը՝ ձեռնամուխ լինելով Խորենացու օգտագործած ժամանակագրական աղյուսակի վերականգնմանը։ Իսկ այժմ մեր հեղինակն անհամեմատ ընդլայնել է այդ ուղու հորիզոնները՝ հասնելով գիտական լուրջ եզրակացությունների։ Հեղինակը, Խորենացու ժամանակագրական աղյուսակը (աղյուսակ 1, էջ 18—21) կազմելիս, նկատի է ունեցել, որպես սկզբունքային հիմք, այնտեղ ընդգրկվող նյութերի հարաբերակցությունը, ընդ որում սյունակների կամ շարքերի հերթականությունը պայմանավորվում է հարաբերակցության մեջ ընկած ժամանակական առաջնությամբ։ Աղյուսակը կազմված է վեց սյունակներից, որոնցից 1-ին միջանցիկ թվարկումով ցույց է տալիս հետզհետե միմյանց հաջորդող դեպքերի տարիների աստիճանական գումարումը՝ ժամանակի առաջխաղացումը, որի շնորհիվ պարզ և տեսանելի է դառնում, թե աղյուսակում ընդգրկված 736 տարիների ընթացքում ժամանակագրորեն ո՞ր տեղերն են գրավում դեպքերը։ Իսկ վերջին՝ 6-րդ սյունակը պայմանական համարներով ընթերցողին ուղարկում է գրքի Ա հավելվածին, ուր խնամքով ամփոփված են «Մովսես Խորենացու ժամանակագրական ցուցումները» (էջ 146—156)։ Աշխատության այս մասը Խորենացու «Պատմության» Բ և Գ գրքերից ընդգրկում է ժամանակագրական այն բոլոր վկայությունները, թվով 77, որոնց հիման վրա հեղինակը կազմել է սինքրոնիկ աղյուսակը։ Այս 1-ին և 6-րդ սյունակները գիտական այն անհրաժեշտ ապարատն են, որը և՛ հիմնավորում է կատարված աշխատանքը, և՛ դարձնում ընկալելի։

Աղյուսակի հիմնական մասը կազմում են մյուս չորս սյունակները, որոնք ուղղակի արտացոլելով Խորենացու «Պատմության» տվյալները, ընդգրկում են շարքեր՝ սելևկյան-պարթևական-հասանյան թագավորների (2-րդ սյունակ), հայոց թագավորների (3-րդ սյունակ), հայոց կաթողիկոսների (4-րդ սյունակ) և հռոմեական կայսրերի (5-րդ սյունակ)։ Միայն այս շարքերի սինքրոնացմամբ է, որ կապահովվեր ժամանակագրության համակարգային ճշգրտությունը, քանի որ ամեն մի շարքի առանձին մասնիկները (անձնավորությունները) Խորենացու «Պատմության» մեջ այս կամ այն դեպքի նկարագրության առթիվ կարող են ըստ պատեհության հանդես գալ կողմնորոշիչ դերում, օրինակ՝ հայոց թագավորի գահակալության տարին որոշվում է պարթևաց թագավորի տարեթվերով՝ «Արտաշէս թագաւորէ Հայոց փոխանակ Արշակայ հօր իւրոյ ի քսան և ի չորրորդ ամի Արշականայ Պարսից արքայի»1, կամ որոշվում է հռոմեական կայսրի տարեթվերով՝ «Մանրախուզիւ քննեալ՝ գտաք զթագաւորելն Տրդատայ յերրորդ ամի Դիոկղետիանոսի»2, և կամ՝ հայոց հայրապետի տարիները՝ հայոց թագավորի տարեթվերով՝ «ու յետ նորա (Գրիգորի Լուսաւորչի) Արիստակէս՝ ամս եօթն, ի քառասուն և յեօթներորդ ամէն Տրդատայ մինչև ցյիսուն և երրորդ ամն նորին»3 և այլն։ Այսպիսի հարաբերակցության բացահայտման հիման վրա է կառուցված սինքրոնիկ աղյուսակը, տվյալների մեծագույն ճշգրտությամբ, այնպես որ տարբեր ուղղություններից եկող բոլոր տվյալները համապատասխանում են միմյանց և լրացնում։

Խորենացու ժամանակագրական համակարգը վերականգնելու փորձեր եղել են անցյալում և կասկած չկա, որ նախորդ փորձերի մեջ հաջողագույնը Ադոնցինն էր, բայց նա էլ տեղ էր թողել մի շարք ճշգրտումների։ Գրախոսվող աշխատության հեղինակը կատարում է նոր ճշգրտումներ, որոնք մանրամասնորեն հիմնավորվում են Խորենացու ժամանակագրական աղյուսակին կցված ծանոթագրություններում (էջ 22—31)։ Նրանցում շոշափվում են նաև Ադոնցի և ուրիշների կարծիքները։ Այս ճշգրտումների մեջ առանձնապես կարևոր է այն, թե հայոց թագավոր Վարազդատը, ըստ Խորենացու համակարգի, գահակալած պիտի լինի Շապուհ II-ի ոչ թե 55-րդ կամ 57-րդ տարում, ինչպես ունեն Խորենացու «Պատմության» բոլոր ձեռագրերը, այլ 56-րդ տարում (տե՛ս ծան. 675 և 736)։ Խորենացու «Պատմության» ընագրում տրված ուղղակի տվյալներին երբեմն հակադրելով նրա սինքրոնիկ տվյալները՝ հեղինակն ապացուցում է, որ առաջինները ենթակա են սրբագրության, այսպես, օրինակ, հարկ է լինում հայոց թագավոր Երվանդի իշխանության տարիների թիվը 20-ից բարձրացնել 21-ի, և կամ՝ Փառներսեհի կաթողիկոսության տարիների թիվը 4-ից իջեցնել 3-ի (տե՛ս ծան. 342 և 636)։ Նմանօրինակ և այլ կարգի ճշտումներով հեղինակը Խորենացու համակարգային աղյուսակն ազատում է մի շարք աղավաղումներից, հենվելով համոզիչ փաստարկումների վրա։

Վերականգնված աղյուսակի սյունակների հերթականության կապակցությամբ պիտի ասել, որ սինքրոնիկ համակարգի մեջ ժամանակագրորեն իշխողը և որոշիչ դեր կատարողը տրամա-

---

1 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց» (աշխատությամբ Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի), Թիֆլիս, 1913, էջ 121։

2 Խորենացի, էջ 224։

3 Խորենացի, էջ 243։

բանորեն նախորդ սյունակն է հաջորդի կամ հաջորդների նկատմամբ։ Այս տեսակետից ավելի լավ կլիներ հռոմեական կայսրերի շարքը աղյուսակում տեղավորել Սասանյանների շարքից հետո՝ հայոց թագավորների շարքից առաջ, որովհետև այդ շարքը, Սասանյանների շարքի հետ միասին, զուգահեռաբար որոշիչ դեր է կատարում հայոց թագավորների ժամանակագրական տվյալների ճշտման մեջ։ Այսուհանդերձ պետք է նշել, որ հետագայում, աղյուսակի շարքերի վերլուծության ընթացքում, հեղինակը հռոմեական շարքն անհրաժեշտաբար կցել է սասանյանին (տե՛ս էջ 55—66)։

Խորենացու ժամանակագրական աղյուսակի վերականգնումը բնագրաբանական կարևոր գործ էր։ Սակայն հեղինակը, շարունակելով իր հետազոտությունները, նպատակ է ունեցել ցույց տալ, թե այս բնագավառում կատարվելիք աշխատանքները պիտի կայանան ոչ միայն Խորենացու ժամանակագրական համակարգը վերականգնելու մեջ, այլև նրա առանձնահատկությունները բացահայտելու։ Որոշ բանասերներ աշխատել են Խորենացու համակարգը սրբագրություններով հարմարեցնել այժմյան գիտական պատկերացումներին։ Փորձեր են կատարել, օրինակ, Ք. Պատկանյանը և Ս. Մալխասյանը։ Դ. Սարգսյանի փորձը նախորդներից տարբերվում է այն բանով, որ նա չի ջանում «շտկել», «ուղղել» Խորենացու համակարգը՝ զանազան հնարքներով թվեր ավելացնելով ու պակասեցնելով, «վերացնել» նրա շեղումները մեր արդի պատկերացումներից, այլ ձգտում է վեր հանել այդ շեղումները, բացատրել դրանք ցույց տալով նրանց ակունքները և պատճառները, և այդ ճանապարհով դյուրացնել Խորենացու ժամանակագրական համակարգի տվյալներով ստույգ պատմական ժամանակագրությունը հարստացնելու գործը։

Հեղինակի նպատակներից մեկն է տարրալուծել համակարգը և վերածել այն տարրերի, որոնցից Խորենացին իր ժամանակ հավաքել է այն նմանօրինակ աշխատանքը, սակայն, ունի իր դժվարությունները, որովհետև որոշ դեպքերում այդ տարրերն այնպես են մշակվել ու հղկվել Խորենացու կողմից, որ կորցրել են իրենց նկարագիրը։

Այդ նպատակներին հասնելու համար նա կիրառում է մի նոր՝ Խորենացու աղբյուրների հաճախակի անհայտությունից ելնող միջոց՝ նրա տվյալների համեմատությունը պատմական իրականության հետ, որքանով այդ իրականությունն արտահայտվել է ժամանակի ստույգ, բայց Խորենացուն անծանոթ մնացած աղբյուրներում, բայց ոչ երբեք նպատակ ունենալով «սրբագրել» Խորենացուն ըստ այդ իրականության, այլ որոշել նրա ստուգության աստիճանը՝ պարզելու համար, որ այս ու այն դեպքում Խորենացին ունեցել է լավագույն, թեև մեզ անհայտ, աղբյուր, իսկ այնինչ դեպքում՝ չի ունեցել, կամ ունեցել է վատագույն։ Խորենացու նման յուրահատուկ հեղինակի գործը անհնարին էր վերլուծել առանց նման նոր՝ նրա ուրույն բնույթը հաշվի առնող միջոցների կիրառման։ Պետք է ասել, որ այդ միջոցներն իրենց արդարացրել են։

Համակարգի վերլուծությունը կատարվում է շարք առ շարք։

Առաջին սյունակի հենց պարթևական շարքի քննության (էջ 34—40) կապակցությամբ հեղինակն առաջ է քաշում Խորենացու «Պատմության» և Անանունի (Սեբեոսի անունով հայտնի «Պատմությանն» առկցված երկու հատվածների) աղերսի հարցը, որն անցյալում տարակարծությունների առարկա է եղել բանասերների միջև։ Եթե Մալխասյանն ու Ադոնցը այն հակադիր կարծիքներն ունեին, թե Անանունը (կամ Սեբեոսը) օգտվել է Խորենացուց կամ հակառակը, ապա մեր հեղինակը նախ նշում է, որ Խորենացին և Անանունն ունեն ժամանակագրական տարբեր համակարգեր, երկրորդ՝ որ Խորենացու և Անանունի ժամանակագրությունների միջև նկատվող կապերն անմիջական չեն, այլ դալիս են ընդհանուր աղբյուրից, VI դարի հեղինակ Պրոկոպիոս Կեսարացու կողմից վկայակոչվող «Հայոց պատմություն»-ից, որը Մար Արաս Մծուրնացու պատմությունն է։ Հեղինակն այլևայլ առիթներով ընդհանրապես քննարկում է այն հարցը, թե Խորենացին ինչպիսի՞ աղբյուրների ազդեցության տակ է դտնվել, և մանավանդ այն դրդապատճառները, որոնք նրան հաճախ հարկադրել են շեղումներ կատարել վերոնշյալ ընդհանուր աղբյուրից, շեղումներ, որոնցով նա երբեմն ավելի է մոտեցել այժմյան գիտական ժամանակագրության տվյալներին։

Սասանյանների շարքի ուսումնասիրության մեջ (էջ 40—55) նրա առանձնահատկությունները բացահայտվում են երկու աղյուսակների օգնությամբ։ Առաջինում այդ շարքը դիտվում է ինքնուրույն, սկսած Արտաշիր Պապականի գահակալման տարվանից։ Պարզվում է, որ թեև Սասանյան առանձին թագավորների իշխանության տևողությունը մի շարք դեպքերում ճիշտ չի նշված Խորենացու մոտ, բայց և, այնուհանդերձ, նրանց հաջորդումարն ստույգ է, որից բխում է, որ Խորենացուն հայտնի է եղել (բանավոր կամ գրավոր աղբյուրից) այնպիսի մի հաջորդումարային թիվ, որպիսին է պարթև և հայ Արշակունիների թագման տարեթվերի միջև ընկած ժամանակաշրջանի ստույգ տևողությունը (202 տարի)։ Սա, իհարկե, կռահում է, բայց ունի

տրամաբանական հիմք, որով բավականաչափ համոզիչ է։ Երկրորդ աղյուսակից, որի մեջ Սասանյանների շարքը դիտվում է բացարձակ ժամանակագրության խորքի վրա, պարզվում է, որ Խորենացուն, ըստ երևույթին ասորական աղբյուրներից, հայտնի է եղել Շապուհ II-ի գահակալման տարեթիվը՝ սելևկյան տոմարով և նրա իշխանության ստույգ տևողությունը։ Ակնարկվող կամ ենթադրվող ասորական աղբյուրների հետ, անտարակույս, առնչվում է հեղինակի մատնանշած այն փաստը, թե VI դարի ասորի ժամանակագիր Մըշիհա Զրխայի տեղեկության համաձայն Շապուհ II-ը թագավորել է «մոտավորապես 70 տարի, սկսած հունաց 620 թվականից, մինչև 690 թվականը»։ Հեղինակի հետ կարծում ենք, թե «բացառված չէ, որ Մըշիհա Զրխան և Խորենացին օգտված լինեն միևնույն աղբյուրից» (էջ 49). բայց բացառված չէ նաև հեղինակի մատնանշած ասորական աղբյուրների հետ առնչությունը այն ընդհանուր աղբյուրի, որը տվյալների նույնությամբ կամ մոտիկությամբ հետքեր է թողել և՛ Անանունի, և՛ Խորենացու ժամանակագրություններում, եթե նկատի ունենանք, որ Անանունը ևս Շապուհ II-ին տալիս է 70 տարի (ըստ բոլոր ձեռագիր և տպագիր օրինակների)[4].

Վերոհիշյալ տվյալները պարթև և հայ Արշակունիների բարձման միջոցը և Շապուհ II-ի տարեթիվը կովանեներ են հանդիսացել Խորենացու համար՝ Սասանյանների շարքը իր համակարգում տեղադրելիս, ըստ որում շարքի ներսում Շապուհի ոչ ճիշտ տեղադրված լինելը պատճառ է հանդիսացել, որ շարքը 14 տարով անճիշտ տեղադրվի, որի հետևանքով ամբողջ համակարգը կրճատվել է 14 տարով (այսինքն՝ Սելևկոս Նիկատորի գահակալությունից մինչև Հազկերտ II-ի գահակալությունը՝ 736 տարի, իրական ժամանակագրության 750 տարիների փոխարեն)։ Այս կրճատումների պատճառները քննվում են։ Դրանցից մեկը, որ Խորենացու կողմից Ղազար Փարպեցու մի տվյալի սխալ օգտագործումն է (Շապուհ II-ի և Շապուհ III-ի շփոթումն իրար հետ), բացահայտվում է հայոց թագավորների շարքի քննությունից հետո (էջ 120—121)։

Հռոմեական շարքը (տե՛ս էջ 55—66) ևս դիտվում է երկու տեսակետերով՝ ա) ինքնուրույն և բ) բացարձակ ժամանակագրության խորքի վրա։ Ինքնուրույն դիտվելիս նա ցուցաբերում է հետևյալ առանձնահատկությունը. նրա միջին՝ գերակշռող մասը՝ մեր թվագր. 1—382 թթ.՝ համաչափ ու ստույգ է, իսկ դրանից առաջ և հետո ընկած մասերը՝ աղճատված։ Սկզբնական հատվածը սեղմված է, եզրափակիչը, ընդհակառակն, երկարացված։ Բացարձակ ժամանակագրության խորքի վրա դիտվելիս՝ շարքը ի հայտ է բերում այլ առանձնահատկություններ. պարսից պատմության հետ համադրելիս՝ նրա միջին՝ ճշգրիտ և սլացիկ մասը վերածվում է անժամանակությունների մի շարանի։ Հռոմի պատմության դեպքերն ու դեմքերը իրենց օրինական ժամանակից 20—40 տարի վաղ են ի հայտ գալիս, մի երևույթ, որը բազմիցս նշվել է, բայց չի բացատրվել։ Ընդհակառակն՝ շարքի առավել աղճատված մասերում, նրա երկու ծայրակետերում, վիճակն ուղղվում է՝ անժամանակությունը վերանում է։ Հետևությունն այն է, որ հռոմեական շարքի միջին մասն ամբողջությամբ տեղաշարժված է դեպի աղյուսակի սկիզբը, ըստ որում ծայրակետերը մնացել են անշարժ։ Հեղինակն այս իրողության պատճառը որոնելիս, հետագայում, այլ հարցերի կապակցությամբ, մատնացույց անելով Արտաշիր Պապականի և Դիոկղեկտիանոս կայսրի ժամանակագրական այն առնչությունը, որն Ագաթանգեղոսից հայտնի էր եղել Խորենացուն (հմմտ. էջ 89—91), գտնում է, որ դա է հանդիսանում այն սկզբնական անաքրոնիկ կետը, որից կարող էին առաջանալ մնացյալ անաքրոնիկ առնչությունները Խորենացու մոտ տվյալ հարցերում (հմմտ. էջ 121—123)։

Հեղինակը երկարորեն կանգ է առնում հայոց թագավորների շարքի վրա (էջ 74—119)։ Այս շարքը բաժանելով երկու մասերի՝ ա) սկզբից մինչև Խոսրով Մեծ և բ) Տրդատից մինչև վերջ, հեղինակը փորձ է կատարում գտնելու նրանց արմատները։ Համեմատությունը Անանունի համապատասխան ցանկերի հետ՝ վեր է հանում նրանց միջև եղած նմանությունները և տարբերությունները։ Շարքի առաջին մասն ազգակից է Անանունի շարքի համապատասխան մասին։ Խո-

---

4 Տե՛ս «Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն», Դ տպագր. (հրատ. Ստ. Մալխասյանի), Երևան, 1939, էջ 17։

Մալխասյանը հիշյալ 70 թիվն առաջարկում է ուղղել՝ 74, հարմարեցնելու համար աղյուսակի սինքրոնությանը (հմմտ. էջ 19՝ Շապուհի վերջին հիշատակման և Արտաշրի գահակալության տվյալները)։ Գ. Սարգսյանը ևս նույն նկատառումով առաջարկում է 70-ը դարձնել 73, տե՛ս քննարկվող աշխատությունը, էջ 40, ծան. 18։ Մեր կարծիքով՝ ուղղումների կարիք չկա, որովհետև Անանունը կարող էր այս միջոցին մի քանի տարով թափուր համարել Պարսկաստանի գահը։

բենացին որոշ փոփոխություններ է մտցրել, որոնց դրդապատճառները վեր են հանվում. դրանք են՝ նրան ավելի ստույգ թվացող այլ աղբյուրները։ Այս հատվածը, ի տարբերություն այլ շարքերի, չի համեմատված ստույգ ժամանակագրության հետ, որովհետև շատ է տարբերվում նրանից, միանգամայն այլ պատկերացում է հանդես բերում այդ շրջանի պատմության մասին, և կարող է առանձին ուսումնասիրության առարկա լինել։ Հայկական ցանկի երկրորդ մասը, Տրդատից սկսած, հետապոտվում է արդեն փորձված տեսակետերով՝ ա) ինքնուրույն, բ) ընդհանուր ժամանակագրության խորքի վրա՝ ստույգ ժամանակագրության հետ համեմատության մեջ։

Առաջին վերլուծությունը պարզում է Խորենացու և Անանունի ժամանակագրությունների առնչությունը V դարի այլ պատմիչների՝ Ագաթանգեղոսի, Փավստոսի, Փարպեցու, Կորյունի ժամանակագրական պատկերացումների հետ։ Պարզվում է, որ շարքի այս հատվածում Խորենացու և Անանունի արմատները տարբեր են։ Խորենացին մոտ է Ագաթանգեղոսին և Փարպեցուն, և համեմատաբար հեռու՝ Փավստոսից. Անանունը, ընդհակառակն, փավստոսյան է, հեռու Ագաթանգեղոսից և Փարպեցուց։ Երկրորդ վերլուծությունը ցույց է տալիս, որ Խորենացու ժամանակագրության այս հատվածը, ավելի Հիշտ՝ նրա մի մասը, Տրդատից մինչև Պապ, ձգձգված է, ըստ որում ձգձգված է հռոմեական ժամանակագրության զուգընթաց, և, ինչպես պարզվում է, նույն պատճառներով։ Այդ պատճառը վեր է հանվում մեծ հավանականությամբ. Խորենացին ընդօրինակել է Ագաթանգեղոսի Արտաշիր—Խոսրով Մեծ—Տրդատ Մեծ հատվածի սխալ ժամանակագրությունը, այն դարձրել՝ իր համակարգի կովաններից մեկը, որի հետևանքով էլ առաջացել է անժամանակությունների մի շարան Հռոմի և պարսից պատմության միջև։ Հատվածի մյուս մասը, Պապից մինչև վերջ, ընդհակառակ, սեղմված է, և այս՝ Սասանյանների շարքի համապատասխան հատվածին զուգընթաց։ Վեր են հանվում սեղմման այն պատճառները, որոնք ընկած են Խորենացու աղբյուրների մեջ, և ցույց է տրվում, որ, այսուհանդերձ, այստեղ Խորենացին լավորակ աղբյուր է ունեցել։ Հեղինակը մի հատուկ աղյուսակի միջոցով փորձ է կատարում վերականգնելու այդ աղբյուրի տեսքը (էջ 116)։

Հայոց կաթողիկոսների շարքը «Խորենացու ժամանակագրական համակարգի ճանաչման համար լական հետաքրքրություն չի ներկայացնում, քանի որ շաղկապված է միայն մի շարքի (հայոց թագավորների) հետ և այն էլ ակներևաբար ձևավորվել է այդ շարքի ազդեցության ներքո» (էջ 119)։ Սակայն կաթողիկոսների տարեթվերի հետ կապված մի շարք կարևոր ճշտումներ հեղինակն արդեն կատարել է Խորենացու համակարգային աղյուսակին առընթեր տրված ծանոթություններում (էջ 27—31) և այդտեղից երևում է, որ սինքրոնացման հաշիվների ճշգրտման տեսակետից կաթողիկոսների տարեթվերը որոշ նշանակություն ներկայացրել են։ Իսկ այն հարցը, թե կաթողիկոսների շարքի կապակցությամբ Խորենացին որտեղի՞ց է վերցրել իր թվական տվյալները, բավարար պատասխան չունի։ Համենայն դեպս՝ բավարար ուշադրություն չի նվիրված կաթողիկոսների շարքին։ Թերևս նրա առավել մանրամասն վերլուծությունը հեղինակի մշակած միջոցներով՝ հարստացներ և՛ տվյալ շարքի, և՛ ամբողջ աշխատության եզրակացությունները։

Անանունի և Խորենացու աղերսի հարցը բազմիցս շոշափվել է աշխատության մեջ և մենք այդ մասին հիշատակեցինք միայն անհրաժեշտության առիթներով։ Այստեղ՝ համակարգի շարքերի քննությունից հետո հեղինակը հանրագումարի է բերում երկու ժամանակագրությունների առնչության խնդրում իր ունեցած տեսակետները (էջ 125—129), ըստ որում հանգում է այն համոզիչ եզրակացության, որ այդ ժամանակագրություններն իրենց համակարգերով միմյանցից տարբեր են և անկախ են, թեև շատ դեպքերում՝ նույն աղբյուրներից քաղված (Մար-Աբաս Մծուրնացի, Եվսեբիոս Կեսարացի և այլն). և քանի որ վերանում է փոխադարձ կախման հարցը, վերանում է նաև Խորենացու ժամանակը որոշելու հարցում Անանունի ժամանակը հաշվի առնելու անհրաժեշտությունը, մի հանգամանք, որը բանասիրության մեջ հաճախ դրդապատճառ է հանդիսացել Խորենացուն իր ապրած ժամանակից՝ V դարից տեղաշարժելու։

Ուշադրավ են այն էջերը, որ հեղինակը նվիրել է Խորենացու աշխատանքի մեթոդիկայի ուսումնասիրությանը (էջ 130—147)։ Պարզվում է, որ Խորենացին ունեցել է բազմաթիվ, հաճախ իրարամերժ, տվյալներ. դրանցից ընտրել է մի քանիսը,— տասնյակից ավելի,— որոնք այս կամ այն պատճառով նրան առավել ստույգ են թվացել. դրանք դարձրել է ժամանակագրական կովաններ՝ հիմք, և մնացած նյութը բաշխել է նրանց վրա։ Բարեբախտաբար, այդ կովանները, ինչպես ցույց է տալիս հեղինակը, Խորենացու պատմական սուր հոտառության շնորհիվ մեծ մասամբ ստույգ-պատմական են, ուստի և նրանց վրա հեցած համակարգը, հակառակ իր ունեցած շեղումներին, շատ ավելի մոտ է պատմական իրականությանը, քան հայ պատմագիտության

մեջ նրան նախորդած ժամանակագրական այլ պատկերացումները։ Կովանների ընտրությունից հետո մնացած նյութը, որ հարմարեցվում է կովաններին, նորից ուշադիր վերաբերմունքի է արժանանում Խորենացու կողմից. այն փոփոխության է ենթարկվում միայն անհրաժեշտության դեպքում, եթե Խորենացին գործ ունի մի ամբողջ շարքի հետ, ձգտում է հնարավորին չափ անաղարտ պահել այդ շարքը, կուտակելով անհրաժեշտ փոփոխությունները միմիայն շարքի սկզբում և վերջում։ Այնպես որ այս ստորադասված նյութի մեջ ևս Խորենացու աղբյուրներից եկող շատ կարևոր տեղեկություններ են պահպանվել։ Պետք է ասել, որ Խորենացու համակարգի վերլուծության համար առաջ քաշված կովանների այս տեսությունը հեղինակի դրույթների մեջ փայլուն տեղ է գրավում։

Մի անգամ ըմբռնելով Խորենացու ժամանակագրական համակարգի կառուցվածքն ու առանձնահատկությունները, այլևս դյուրանում է նրա տվյալներից օգտվելը՝ գիտական ժամանակագրություն կառուցելու գործում։ Հիմք է ստեղծվում որոշելու, թե այս տեղեկությունը ընդունելի է, իսկ այն՝ ոչ, կամ անհրաժեշտ են այս ու այն ճշտումները, և ինչո՞ւ։ Ինչպես ասում է հեղինակը՝ «ժամանակագրական համակարգը, Խորենացու կողմից որոշ աղբյուրների հիման վրա ստեղծվելուց հետո, իր հերթին դարձել է նրա «Պատմության» յուրահատուկ աղբյուր», այսինքն՝ արքայական շարքերի ներսում կատարված տեղաշարժերի հետևանքով առաջ եկած անժամանակությունները «օրինականացվել են» Խորենացու կողմից և «Պատմության» շարադրանքում դիտվել որպես պատմական փաստեր։ Այս երևույթը հեղինակն անվանում է «ժամանակագրական համակարգի արտադրանք». և այս իրողության բացահայտմամբ հնարավորություն է ստեղծվում Խորենացու պատմության մեջ գտնելու այդպիսի նյութերը այն հավաստի նյութերից, որոնցով այնքան հարուստ է հայոց պատմահոր աշխատությունը։ Ժամանակագրական համակարգին չվերաբերող երկու օրինակներով հաստատվում է այն ենթադրությունը, թե Խորենացու աշխատանքի վեր հանված մեթոդները և եղանակները կիրառվել են ոչ միայն ժամանակագրություն ստեղծելու համար, այլև հատուկ են ամբողջ «Հայոց պատմությանը»։ Սրանով ճանապարհ է հարթվում դեպի ամբողջ «Պատմության» համապատասխան վերլուծությունը։ Այստեղ ասենք նաև, որ աշխատության վերջում իր թեզերի կապակցությամբ հեղինակն անդրադառնում է բանասերներ Ստ. Մալխասյանցի և Թադ. Ավդալբեկյանի աշխատանքների մեթոդական կողմերին։ Նախ բացահայտվում է Մալխասյանցի՝ մեթոդական տեսակետից ոչ-ճիշտ մոտեցումը Խորենացու համակարգից օգտվելու գործին՝ պատմական տարեթվեր որոշելիս (էջ 159—163)։ Տվյալ դեպքում Մալխասյանցը հաշվի չի առել, որ հայկական շարքերը, ինչպես թագավորներինը, այնպես էլ, նրա հետ միասին, կաթողիկոսներինը, արհեստականորեն երկարաձգված են Խորենացու մոտ, և հանգել է ոչ-ճիշտ եզրակացության՝ Տրդատի գահակալության տարեթիվը որոշելիս։ Ապա քննարկվում է Ավդալբեկյանի փորձը (էջ 164—169)՝ վերականգնելու Խորենացու համակարգը՝ իր նախնական տեսքով։ Ցույց է տրվում, որ այստեղ խախտված է այն սկզբունքը, թե Խորենացու համակարգը պետք է ստուգել ու ճշտել ոչ գիտական ժամանակագրությամբ, այլ հենց իր՝ Խորենացու ժամանակագրության մնացյալ տվյալներով և կամ նրա «Պատմության» այլ՝ նկարագրական տվյալներով։

Քննարկվող աշխատության մեջ, նյութի ստեղծած առիթներով, հեղինակը երկու տեղ ծավալվել է կողմնակի հետազոտությունների մեջ, որոնք կարող են ունենալ նաև ինքնուրույն նշանակություն։ Դրանցից առաջինը վերաբերում է Կորյունի ժամանակագրությանը (էջ 98—100)։ Ցույց է տրվում, որ Վռամ Կրմանի և առկա ձեռագրերում պակասող Վռամի (Հազկերտ I-ի որդու) թագավորության տևողությունը Կորյունի մոտ համապատասխանաբար եղել է 6 և 21 և ոչ՝ 10 և 18, ինչպես կարծում է Մ. Աբեղյանը՝ ելնելով այլ աղբյուրների վրա հենվող արդի պատկերացումներից։ Մյուսը՝ Ղազար Փարպեցու մեզ հասած բնագրի մի հատվածի հետուառաջության շտկումն է (էջ 95—104)։

Աշխատության մեջ արծարծված հետաքրքրական խնդիրներից մեկը տոմարների հարցն է։ Ե՞նչ տոմար է օգտագործել Մովսես Խորենացին իր «Հայոց պատմության» մեջ։ Այս հարցը հեղինակի կողմից շոշափվում է երկու առումով՝ փրկչական տոմարի և սելևկյան տոմարի։

Խոսելով փրկչական տոմարի մասին (էջ 66—68)՝ հեղինակը նկատում է, որ Խորենացու «Պատմության» մեջ գոյություն չունի այդ տոմարի օգտագործման և ոչ մի հետք։ Ճիշտ է, թե հետագայում, Խորենացու «Պատմության» ցուցմունքներին հետևող հայ պատմագիրները, հենվելով նրա մի տվյալի վրա (թե Արգարի 2-րդ տարում ծնվել է Քրիստոսը), Քրիստոսի թվականով են հաշվել դեպքերը, բայց դա կապ չունի Խորենացու հետ։ Իրոք փրկչական տոմարի օգտագործման հետք չէր կարող լինել V դարի հեղինակ Խորենացու մոտ, քանի որ, ինչպես հայտնի է, Քրիստոսի ծննդյան տարին տոմարական մեկնակետ դարձնելու գաղա-

փարի հղացումն առաջին անգամ ունեցել է VI դարի դիտնական Դիոնեսիոս Կրտսերը։ Անշուշտ այս պարագան է, որ նկատի ունի հեղինակը,— թեև այդ մասին չի խոսում,—երբ դրում է. որ «թե հայոց պատմահայրը ծանոթ եղած լիներ փրկչական տոմարին՝ «այդ կարող էր ազդել Խորենացու կյանքի թվագրման հարցի լուծման վրա բացասական իմաստով», իսկ ծանոթ չլինելը՝ «հնարավոր մի փաստարկ է խլում Խորենացուն V դարից տեղաշարժողների ձեռքից», և այսպիսի իմաստով էլ «այս հարցի նշանակությունը ավելի մեծ է, քան միայն Խորենացու ժամանակագրության ներքին խնդիրները»։

Սելևկյան տոմարի մասին հեղինակն ունի այլ կարծիք։ Ելնելով այն փաստից, թե Խորենացու մոտ ժամանակագրական տվյալներն սկսվում են Սելևկոս Նիկատորի գահակալությունից, և որ նույնն է՝ սելևկյան տոմարի հաստատման ժամանակից (Ն. մ. թ. 312/311 թ.), հեղինակը ասում է. որ «այդ համապատասխանությունը պատահական բնույթ չի կրում» և որ «Խորենացին իսկապես օգտվել է սելևկյան տոմարից» (էջ 22)։ Այս հարցում մենք համակարծիք չենք հեղինակին, նկատի ունենալով, որ տոմարական հաշվարկման որևէ հետք առասարակ չի երևվում Խորենացու ամբողջ ժամանակագրության մեջ։ Տոմարական բնույթի այն երկու նշումները, որոնք տեղ են գտել Խորենացու մոտ Սահակ Պարթեի և Մեսրոպ Մաշտոցի մահվան կապակցությամբ («յելս ամսոյն նաւասարդի»[5], «յերեքտասանն մեհեկանի»[6]), դուրս են մնում նրա ժամանակագրական համակարգի ոլորտներից։

Սախսրդ էջերում վեր հանելով քննարկվող աշխատության դիտական արժանիքները, մենք միաժամանակ արձանագրեցինք որոշ դիտողություններ։ Դրանց հետ միասին՝ ցանկալի կհամարեինք, որ հեղինակը անպայման ձեռնամուխ լիներ Խորենացու «Պատմության» Բ գրքում ի հայտ եկող պատմական պատկերացումների մանրամասն ուսումնասիրությանը, որի համար ճանապարհ է բացում ժամանակագրության ներկա հետազոտությունը։ Բացի այդ, ինչպես տեսանք, այս հետազոտության մեջ ընդգրկված են Խորենացու «Պատմության» միայն Բ և Գ գլուխները. այդ, հասկանալի է, նրա համար է, որ «Պատմության» այդ մասերը պարունակում են ժամանակագրական որոշակի տվյալներ, որոնք լիովին արտացոլում են համակարգի գոյությունը։ Սակայն՝ Ա գլխում ևս, համակարգ չլինելով հանդերձ, կան ժամանակագրական որոշակի պատկերացումներ։ Հարկ է դրանք ևս վեր հանել և դուրս բերել պատմական իրականության այն լրիվ պատկերը, որ Հայաստանն ուներ՝ ըստ Խորենացու «Հայոց պատմության»։ Հույս ունենք, որ հեղինակն այս աշխատանքը ևս կկատարի ապագայում։

Հեղինակն ունի մշակված լեզու։ Հատկապես աչքի է դարնում այն իրողությունը, որ նա խիստ հետևողականությամբ հաշվի է առել հայ հին պատմագրության և հայ ժամանակակից պատմագիտության միջև լեզվա-մշակութային սերտ և միասնական կապ պահպանելու խնդիրը. մի խնդիր, որի վրա, դժբախտաբար, սակավաթիվ հեղինակներ են միայն ուշադրություն դարձնում։ Երբի շարադրանքը մեզ ներկայանում է ոչ միայն հայ բանասիրական հարուրամյա դրականության մեջ մշակման որոշակի մակարդակի հասած լեզվով, այլև օգտագործմամբ պատմական օտար աղբյուրների և օտար անունների այն ձևերի, որոնք նվիրագործված են մեր պատմական դրավոր աղբյուրներում։ Մենք կցանկանայինք մեր երիտասարդ շատ ուրիշ պատմաբանների ուշադրությունը հրավիրել այս հանգամանքի վրա։ Լեզվական այս բնագավառում կան, անշուշտ, որոշ թերություններ էլ, որոնց նշումը, կարծում ենք, կարող է միայն օգտակար լինել։ Այսպես «որի հետևանքով (=շնորհիվ) նա մեզ է հասցրել առաջնակարգ նշանակություն ունեցող...», էջ 33. «Անանուն պատմիչի կողմից ստեղծած (—ստեղծված)», էջ 126. «մեղադրանքը չի վերաբերվում (=վերաբերում)», էջ 32. «նույն ինքը (—նույնինքն) Արշակ անունը», էջ 36. և այլն։

Ամփոփելով մեր խոսքը՝ կասենք, որ աշխատության եզրակացություններն հանդում են դրական խոշոր արդյունքի՝ վեր հանելով հայոց Հերոդոտոսի կոթողական երկի՝ «Հայոց պատմության» իսկական արժանիքները. հնարավորություն են ստեղծում նրա պարունակած պատմական թանկագին նյութը, ժամանակագրական համակարգի ներքին սկզբունքները բացահայտելու ուղիով, փոխադրելու դիտական ժամանակագրության դծի վրա և արժեքավորելու։ Աշխատության մեջ առաջ քաշված կարծիքների և դրույթների շարքը մի ամբողջություն է հանդիսանում տրամաբանական կապակցությունների, որոնց շղթան անընդմեջ ձգվում է սկզբից մինչև վերջը։ Հետազոտությունների ընթացքը մեզ տանում-ասցնում է մեծ մասամբ համոզի՝ դիտականորեն հիմնավորված եզրահանգումների։

---

5 Խորենացի, էջ 355։

6 Խորենացի, էջ 356։

Հեղինակը սույն աշխատությամբ հանդես է դալիս որպես պատմաբան և աղբյուրագետ, որպես բանասեր և բնագրագետ, և այս հանգամանքների շնորհիվ նա կարողացել է տալ սույն ուշագրավ աշխատությունը, որ խորենացիագիտության բնագավառում մի արժեքավոր՝ մնայուն ուսումնասիրություն է։

Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ